

ԱԶԴԱՐԱՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԲՈՒԷՅԹԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

P.O.Box: 8157, Salmiyeh 22052- Kuwait. Tel: 965-25614392, Fax: 965-25638312, e-mail: prelacy@armenianprelacykw.org

ՆՈՐ ՇՐՋԱՆ, Թ. Տարի, Թիւ 370, Ուրբաթ, 03 ՓԵՏՐՈՒԱՐ, 2017

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ՝ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՏՕՆԻՆ ԱՌԹԻՒ

Կիրակի, 29 Յունուար 2017-ի առաւօտուն, Ազգային Վարժարանի շրջափակէն ներս տօնուեցաւ Հայոց Բանակի կազմաւորման 25 ամեակը, ներկայութեամբ՝ Քուէթի եւ Շրջակայից Թեմի Առաջնորդ Գերպ. Տէր Մասիս Ծ. Վրդ. Զօպուեանի, Քուէթի մօտ ՀՀ դեսպան տիար Մանուէլ Բաղէեանի, ազգային մարմիններու ներկայացուցիչներու: Բացման խօսքը արտասանեց Է կարգի աշակերտուի Ռեժինա Հինտոյեան: Շնորհաւորելէ ետք ամբողջ հայութիւնը հայոց պանծալի բանակի 25-րդ յօբելեանին առթիւ՝ մէկ առ մէկ բեմ հրաւիրեց գեղարուեստական յայտագիրի մասնակիցները.



առաջին հերթին Ը կարգէն Շաղիկ Մովսէսեան մեներգեց «Ախ էն էրկրի» երգը, որուն յաջորդեց «Հայրենի Երկիր» ասանունքը, զոր ներկայացուցին Ե կարգէն խումբ մը աշակերտներ: «Մարտիկի երգը» եւ «Զարթիր Լաօ» շուիի եւ ջութակի վրայ նուագեցին՝ Փաթիլ եւ Յովհաննէս Պօղոսեանները: Գեղարուեստական յայտագիրը եզրափակեցին 6-րդ դասարանի աշակերտները՝ «Մեր անունն է հայկական բանակ» երգով:

Աշակերտութեան եւ ներկաներուն մարտական ոգին բարձրացուց խումբ մը աշակերտներու կատարած մարզական ձեւերը: Այնուհետեւ խօսք առաւ վարժարանիս տնօրէն



տօքթ. Ներսէս Սարգիսեան: Ան ըսաւ, թէ հայ ժողովուրդը մեծ գոհողութեան գնով կրցաւ ստեղծել իր սեփական հայրենիքը, որու գոյատեւման երաշխիքը հայկական բանակն ու հայ զինուորն են: Ան շեշտեց, որ Հայաստանի քաղաքացիութիւն ստանալով նաեւ պարտաւոր ենք ծառայել հայկական բանակին:

Խօսք առաւ նաեւ Քուէյթի մօտ ՀՀ դեսպան տիար Մանուէլ Բաղէեան, որ իր հերթին շնորհաւորեց բոլորը պանծալի օրուան առթիւ: Ան կոչ ուղղեց աշակերտներուն բարձրագոյն ուսում ստանալ, որովհետեւ հայոց բանակը այսօր կարիք ունի ոչ միայն ֆիզիքապէս պատրաստուած մարտիկներու, այլեւ՝ խելացի ու բանիմաց մասնագէտներու:

Հուսկ՝ Թեմիս Առաջնորդ Գերպ. Տ. Մասիս Ծ. Վրդ. Զօպունեան իր հայրական պատգամը փոխանցեց աշակերտութեան, յայտնելով, թէ Հայոց Բանակի տօնը ազգային հպարտութեան, ապահով զգալու եւ վերանորոգման օր է: Ի դիմաց Քուէյթի ամբողջ համայնքին՝ Գերպ. Հայր Սուրբը Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչին յայտնեց Քուէյթի հայ գաղութի համակ պատրաստակամութիւնը՝ կանգնելու հայ զինուորին կողքին եւ անոր հետ միասին պաշտպանելու հայրենի հողը: Տօնակատարութեան փակումը տեղի ունեցաւ ՀՀ քայլերգով:

ՀԱՐՄԻ ՔՈՒԷՅԹԻ ՄԵԿՈՒՄԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ԲԱՆԱԿՈՒՄԸ



Կազմակերպութեամբ ՀԱՐՄԻ Քուէյթի մեկուսի մասնաճիւղին տեղի ունեցաւ յատուկ բանակում մը սկաուտական շարքերուն անցնող 26-27-28 Յունուարի օրերուն, Քուէյթի պետական սկաուտական բանակավայրէն ներս: Աւելի քանի 150 գայլ-արծուիկներ եւ արի-արեւուշներ իրենց խմբապետական կազմով մասնակցեցան սոյն բանակումին:

Արդարեւ, աւանդութիւն դարձած տարեկան բանակումի աւարտին, ՀԱՐՄ Քուէյթի մասնաճիւղի սկաուտներն ու խմբապետները իրենց ծնողներն ու բարեկամները հրաւիրած էին մասնակից դառնալու հոգեշարժ խարուկահանդէսին:

Բանակողները բարձր տրամադրութեամբ վերադարձան իրենց տուները իրենց հետ տանելով ԲԱՐՁՐԱՑԻՐ ԲԱՐՁՐԱՑՈՒՐ նշանաբանը:



ՀԱՅԿԱԿԱՆ

Ազրպեյճան Թալիշի Ուղղութեամբ Հետախուզական-Ներթափանցման Փորձ Կատարած Է. Ազրպեյճանցի Մէկ Զինուոր՝ Գերեվարուած

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան պաշտպանութեան նախարարութիւնը կը հաղորդէ, որ 1 փետրուար 2017-ի մօտ ժամը 15:00-ին, ղարաբաղեան-ազրպեյճանական հակամարտ գօրքերու շփման գիծի հիւսիսային (Թալիշ) ուղղութեամբ հակառակորդը, օգտագործելով եղանակային մտախլապատ պայմանները, ձեռնարկած է հետախուզական-ներթափանցման փորձի: Պաշտպանութեան բանակի յառաջապահ ուժերը, ժամանակին նկատելով ազրպեյճանական յատուկ ջոկատայիններու յառաջխաղացումը, դիմած են կանխարգելիչ գործողութիւններու եւ կորուստներ պատճառելով ետ շարտած զանոնք: Կազմակերպուած դիմադրական գործողութեան շնորհիւ, առաջնագիծը պաշտպանող հայկական ուժերը յաջողած են գերեվարել ազրպեյճանական բանակի զինուոր, 1995-ի ծնունդ էլնուր Հուսէյին Չատէն: Ըստ անպաշտօն տուեալներու, հակառակորդը ունի նաեւ առնուազն 1 վիրաւոր, որ, ի դէպ, պաշտօնապէս հաստատուած է Ազրպեյճանի պաշտպանութեան նախարարութեան կողմէ երէկ տարածուած հաղորդագրութեամբ:

«Պաշտպանութեան բանակի յառաջապահ ստորաբաժանումները շփման գիծի ամբողջ երկայնքով կը շարունակեն վստահօրէն իրականացնել իրենց առջեւ դրուած մարտական խնդիրը եւ պատրաստ են չէզոքացնելու որեւէ նախայարձակ գործողութիւն», նշուած է Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան պաշտպանութեան նախարարութեան Մամլոյ ծառայութեան հաղորդագրութեան մէջ:

Միացեալ Նահանգներու Հայ Ուսանողները Ցեղասպանութեան Ժխտման Դէմ Բողոքի Ցոյցեր Պիտի Կազմակերպեն

Միացեալ Նահանգներու մէջ գործող Համահայկական ուսանողական ընկերակցութիւնը (All-ASA) Հայոց ցեղասպանութեան ժխտման դէմ բողոքի լուռ ցոյցեր պիտի կազմակերպէ բարձրագոյն վարժարաններու եւ համալսարաններու մէջ:

Ըստ «Ասպարէզ»-ի, 9 փետրուարին «Ժխտման բիծը» կարգախօսով տեղի ունենալիք ցոյցը հովանաւորած են ՀՅԴ Միացեալ Նահանգներու Արեւելեան եւ Արեւմտեան շրջաններու կառոյցները, ՀՅԴ «Շանթ» ուսանողական միութիւնը, ինչպէս նաեւ «Ալֆա Կամմա Ալֆա»-ն եւ «Ալֆա Էփսիլոն Օմէկա»-ն:



«Ժխտման բիծը» կը կազմակերպուի ամէն տարի ուսանողութեան շրջանակին մէջ Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ իրազեկութեան մակարդակը բարձրացնելու նպատակով: Բողոքի ցոյցին ընթացքին ուսանողները կը պարզեն պատահաններ, կը խօսին Թուրքիոյ վարած ժխտողական քաղաքականութեան, ինչպէս նաեւ Ցեղասպանութեան պատմական փաստի ճանաչման ու փոխհատուցման տրամադրման անհրաժեշտութեան մասին:

Շթայնմայեր. «Գերմանիան Պիտի Շարունակէ Աշխատիլ Ղարաբաղեան Տագնապի Խաղաղ Լուծման Ուղղութեամբ»

Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութեան լրատուութեան եւ հասարակութեան հետ կապերու վարչութենէն կը տեղեկացնեն, թէ Հայաստանի եւ Գերմանիոյ արտաքին գործոց նախարարներ Էդուարդ Նալբանդեան եւ Ֆրանք Վալթեր Շթայնմայեր ուղերձներ փոխանակած են Հայաստանի Հանրապետութեան եւ Գերմանիոյ միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման 25-ամեակին առիթով:



Էդուարդ Նալբանդեան իր ուղերձին մէջ գոհունակութեամբ արձանագրած է, որ յաջողութեամբ կ'ընթանայ բարձր մակարդակի քաղաքական երկխօսութիւնը: Էդուարդ Նալբանդեան նշած է, որ 25 տարին երկու ժողովուրդներու դարաւոր պատմութեան համար ակնթարթ է, սակայն իր անկախութիւնը վերագտած Հայաստանի եւ վերամիաւորուած Գերմանիոյ նորօրեայ պատմութեան մէջ անիկա կը բնորոշէ ամբողջ ժամանակաշրջան մը, դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման ու կայացման կարեւորագոյն փուլ: Հայաստանի արտաքին գործոց նախարարը վստահութիւն յայտնած է, որ անոր հիման վրայ կը շարունակեն կառուցուիլ եւ հարստանալ հայ-գերմանական բազմաշերտ կապերը:

Ֆրանք Վալթեր Շթայնմայեր իր ուղերձին մէջ ընդգծած է, որ նախորդ 25 տարիներուն ընթացքին զարգացած է կապերու բազմաշերտ համակարգ մը, եւ մեր միջեւ առկայ է սերտ համագործակցութիւն՝ հիմնուած փոխադարձ վստահութեան վրայ: Ֆրանք Վալթեր Շթայնմայեր նշած է, որ Գերմանիա կ'աջակցի Հայաստանի ցանկութեան՝ նոր հիմքի վրայ դնելու Եւրոպական Միութեան հետ յարաբերութիւնները եւ ընդլայնելու զանոնք: Ան ըսած է նաեւ, որ, իբրեւ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի անդամ, Գերմանիան պիտի շարունակէ աշխատիլ Ղարաբաղեան տագնապի խաղաղ լուծման ուղղութեամբ եւ աջակցիլ եռանախագահներուն: Շթայնմայեր նաեւ յոյս յայտնած է, որ երկու պետութիւններուն միջեւ համագործակցութիւնը շարունակէ զարգանալ՝ հիմնուած փոխադարձ վստահութեան վրայ:

Դաիթ Լոքեան. «Համայնքներուն Յանձնարարուած Է 2017-ին 20 Առ Հարիրով Աւելցնել Տարեկան Պիտճէները Եւ Աւելի Յստակացնել Միջոցներու Բաշխումը»

31 յունուար 2017-ին Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը վարչապետ Կարէն Կարապետեանի գլխաւորութեամբ շարունակած է Հայաստանի Հանրապետութեան պետական կառավարման մարմիններու գնահատուած կատարողականներու եւ կառավարութեան 2016 թուականի գործունէութեան միջոցառումներու ծրագիրի եւ գերակայ խնդիրներու կատարման մասին հաշուետուութիւններու քննարկումը:

2016-ի միջոցառումներու ծրագիրի եւ գերակայ խնդիրներու իրականացման արդիւնքներուն մասին զեկուցած են Հայաստանի Հանրապետութեան կրթութեան եւ գիտութեան, գիւղատնտեսութեան, տարածքային կառավարման եւ զարգացման, փոխադրութեան, կապի եւ տեղեկատուական արհեստագիտութեան նախարարները, Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարարութեան Գիտութեան պետական կոմիտէի նախագահը, Սննդամթերքի անվտանգութեան պետական ծառայութեան պետը:



Հայաստանի Հանրապետութեան տարածքային կառավարման եւ զարգացման նախարար Դաիթ Լոքեան զեկուցած է, որ հաշուետու տարուան ընթացքին Հայաստանի կառավարութեան հաւանութեան արժանացած է Հայաստանի 2016-2025 թուականներու տարածքային զարգացման ռազմավարութիւնը, որ կը նախատեսէ տարածքներու մրցունակութեան բարձրացում եւ մարզերու միջեւ առկայ ընկերային-տնտեսական անհամաչափութիւններու մեղմացում: Անոր իրագործման շրջագիծին մէջ Եւրոպական Միութեան հետ համագործակցութեան իբրեւ հետեւանք սկսած են 7 շրջանային զարգացման դրամաշնորհային ծրագիրներ՝ շուրջ 10 միլիոն եւրօ ընդհանուր արժէքով: Համաձայնութիւն տրուած է նաեւ Հայաստանի Հանրապետութեան 2017-2036 թուականներու կարծր կենցաղային թափօններու կառավարման համակարգի զարգացման ռազմավարութեան: Կատարելագործուած է համայնքներու 5-ամեայ զարգացման ծրագիրի մշակման եւ կառավարման մեթոտաբանութիւնը. 10 յունուար 2017-ի դրութեամբ մօտ 625 համայնքի աւագանի հաստատած է համայնքներու 5-ամեայ զարգացման ծրագիրները: Մշակուած է համայնքներու պիտճէներու կազմութեան մեթոտաբանութիւնը:

Դաիթ Լոքեան, խօսելով 2017-ի գերակայ խնդիրներուն մասին, ըսած է, որ տարուան ընթացքին աշխատանքներ պիտի տարուին մարզերու զարգացման ռազմավարութիւններու մշակման, համայնքներուն մէջ մատուցուող տարբեր ծառայութիւնները մասնաւոր հատուածի կառավարման յանձնելու, աղբահանութեան հոլովոյթի կանոնակարգման ուղղութեամբ: Համայնքներուն յանձնարարուած է 2017-ին

20 առ հարիւրով աւելցնել տարեկան պիւտճէները եւ աւելի յստակացնել միջոցներու բաշխումը: Շրջաններու եւ գիւղական համայնքներու զարգացման ծրագիրներ պիտի իրականացուին նաեւ Եւրոպական Միութեան օժանդակութեամբ: Վարչատարածքային բարեփոխումներու ծրագրի շրջագիծին մէջ պիտի իրականացուին ներդրումային ծրագիրներ ընդլայնուող համայնքներուն մէջ:

Վարչապետ Կարապետեան կարելոր նկատած է տարածքային կառավարման մարզին մէջ վերլուծական խումբի ստեղծումը, որ պէտք է թուայնացնէ տարածքային կառավարման մարզը, յստակացնէ մարզպետներու գործառոյթները՝ հաւասարակշռելով պատասխանատուութիւնն ու պարտականութիւնները: «Անհրաժեշտ է աշխուժութեամբ աշխատիլ մարզպետներուն հետ՝ մարզերու եւ համայնքներու զարգացման ծրագիրներու իրականացման ուղղութեամբ: Պէտք է համայնքներէն ընտրել յառաջատարները եւ անոնց ամէն ձեւով աջակցիլ: Պէտք է ձեւաւորենք տարածքային կառավարման նոր մօտեցում, 2017 թուականի աւարտին իրաքանչիւր մարզի եւ համայնքի համար ունենանք յստակ ծրագիր», ըսած է վարչապետը՝ աւելցնելով, որ անհրաժեշտ է սահմանամերձ համայնքներուն համար մշակել նաեւ կառավարութեան քաղաքականութիւնը՝ ուղղուած խնդիրներու լուծման եւ աշխատատեղերու ստեղծման:

Վարչապետ Կարապետեան Ընդունած Է Հայաստանի Մէջ Իրանի Եւ Զուիցերիոյ Դեսպանները



Վարչապետ Կարէն Կարապետեան երկէ ընդունած է Հայաստանի Հանրապետութեան մէջ Իրանի արտակարգ եւ լիազօր դեսպան Մէլիտ Քազեմ Սաճատին:

Քննարկուած են հայ-իրանական յարաբերութիւններուն առնչուող շարք մը հարցեր եւ կարելոր նկատուած է առեւտրական-տնտեսական փոխադարձ գործակցութեան հետագայ զարգացումն ու ընդլայնումը: Կողմերը համոզմունք յայտնած են, որ անոր էապէս կը

նպաստեն Մեղրիի մէջ ազատ տնտեսական գօտիի ստեղծումն ու Հայաստանի մէջ «Հալալ» աննդամբերքի գրասենեակ հիմնելու ծրագիրները:

Հայաստանի Հանրապետութեան վարչապետը եւ Իրանի դեսպանը անդրադարձած են ներդրումային միացեալ ծրագիրներուն, ուժանիւթի, գիւղատնտեսութեան, զբօսաշրջութեան, օդանաւային փոխադրումներուն, տեղեկատուական արհեստագիտութեան եւ այլ մարզերու մէջ համագործակցութեան հետագայ ընդլայնման ուղղուած շարք մը հարցերու:

Վարչապետ Կարէն Կարապետեան եւ Մէլիտ Քազեմ Սաճատի ընդգծած են Հայաստանի ու Իրանի շահագրգռուածութիւնը բազմակողմանի կապերու զարգացման ու աւելի խորացման:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

**Ներգաղթեալներու Վերաբերեալ Հրամանագիրին Հարցով.
Սան Ֆրանսիսքոյի Իշխանութիւնները Դատ Բացած Են
Թրամփի Դէմ**

Միացեալ Նահանգներու Քալիֆորնիա նահանգի Սան Ֆրանսիսքո քաղաքի իշխանութիւնները դատական հայց ներկայացուցած են՝ կասեցնելու համար ազդեցութիւնը նախագահ Տանըլտ Թրամփի հրամանագիրին, որուն համաձայն պիտի նուազեցուի դաշնակցային ֆինանսատրոււմը Միացեալ Նահանգներու այն քաղաքներուն, որոնց իշխանութիւնները ապօրինի ներգաղթեալներուն դէմ քայլերու չեն ձեռնարկեր:




«Ռոյթըրը» լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ համապատասխան հայցը ներկայացուած է Դաշնակցային դատարան՝ քաղաքային դատախազ Տենիս Հերերոյի կողմէ:

Կը նշուի, որ Միացեալ Նահանգներու որոշ քաղաքներու (ներառեալ Սան Ֆրանսիսքոն) իշխանութիւնները կը վարեն քաղաքականութիւն մը, որուն համաձայն, իրենց տարածք եկած ապօրինի գաղթականները չեն հետապնդուիր ներգաղթային օրէնսդրութիւնը խախտելու համար:

Նախապէս Թրամփ ստորագրած էր հրամանագիր մը, որուն համաձայն, այդպիսի քաղաքներու դաշնակցային ֆինանսատրոււմը պետք է դադրեցուի:

**ՄԱԿ Թուրքիոյ Կոչ Կ'ուղղէ Ազատ Արձակելու
Կիւլենականներու Գործով Ձերբակալուած Դատաւորը**

«Սփութնիք»-ի թրքական ծառայութիւնը կը հաղորդէ, որ ՄԱԿ-ի Արդարադատութեան միջազգային դատարանը վճիռ արձակած է Թուրքիոյ մէջ 15 յուլիս 2016-ին տեղի ունեցած յեղաշրջման փորձի գործի ծիրին մէջ ձերբակալուած դատաւոր Այտըն Սեֆա Աքայի առնչութեամբ՝ կոչ ուղղելով ազատ արձակելու դատաւորը:



ՄԱԿ ընդգծած է, որ Աքան ձերբակալելով՝ Թուրքիա խախտած է վերջինիս անձեռնմխելիութիւնը:

Ալիե Պիտի Այցելէ Իրան

Ազրպեյճանի նախագահ Իլհամ Ալիե մարտի սկիզբը պիտի այցելէ Իրան: ԱՓԱ լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ այս մասին յայտնած է Ազրպեյճանի մէջ Իրանի դեսպան Ճաւատ Ճահանկիրգասէն:

«Այցելութեան ընթացքին պիտի ստորագրուին շարք մը համաձայնագիրներ: Ներկայիս այդ ուղղութեամբ կը տարուին աշխատանքներ», յայտնած է ան:

Ապահովութեան Խորհուրդը Սուրիական Տագնապի Կողմերուն Կոչ Ուղղած Է՝ Բանակցելու Առանց Նախապայմաններու

«ՌԻԱ Նովոսթի» կը հաղորդէ, որ ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդը դիմած է սուրիական տագնապի կողմերուն՝ կոչ ուղղելով 20 փետրուարին Ժընեւի մէջ տեղի ունենալիք բանակցութիւններու նոր փուլին մասնակցելու առանց նախապայմաններու:



«Ապահովութեան Խորհուրդի անդամները կ'ակնկալեն, որ միջսուրիական բանակցութիւնները պիտի վերականգնին, կ'աջակցին Սուրիոյ հարցով ՄԱԿ-ի յատուկ պատուիրակ Սթեֆան տը Միսթուրայի՝ ժընեւեան բանակցութիւնները ըստ կարելոյն արագ վերսկսելու հարցին մէջ եւ կոչ կ'ուղղեն հակամարտող կողմերուն՝ մասնակցելու բանակցութիւններուն՝ առանց նախապայմաններու», կը նշուի

որդեգրուած յայտարարութեան մէջ:

Լրատու գործակալութիւնը նաեւ կը հաղորդէ, որ յայտարարութեան նախագիծը նախապատրաստուած է ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդին մէջ քննարկման դրուած է Ռուսիոյ կողմէ:

ՄԱԿ-ի մօտ Բրիտանիոյ դեսպան Մեթիու Ռայքրոֆթ յայտարարեց, որ որոշուած է ՄԱԿ-ի հովանաւորութեամբ յաջորդ միջսուրիական բանակցութիւնները կատարել 20 փետրուարին:

Յայտնենք, որ Ժընեւի մէջ նախատեսուած վերոնշեալ ժողովը տեղի պիտի ունենար 8 փետրուարին, սակայն Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրով անցեալ շաբաթ անոր յետաձգումը յայտարարեց:

WWW.ARMENIANPRELACYKW.ORG

ԱՆՂԱՐԱՐ

Ոչ առարկայական Ձեկուցում Մը

31 հոկտեմբեր 1940-ին Վենտել Ուիլքի (1940-ին Հանրապետական կուսակցության կողմէ Միացեալ Նահանգներու նախագահական թեկնածու) եւ օրին Միացեալ Նահանգներու առաջին տիկին Էդոդ Էլիոնոր Ռուզվելթի կողմէ հիմնուած ուաշինկթընեան «Ֆրիտըմ Հաուս» իրաւապաշտպան կազմակերպութիւնը հրապարակեց 2016-ի վերաբերող իր «Ազատութիւնը աշխարհի վրայ 2017» զեկուցումը, որուն մէջ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի հանրապետութիւնները յաջորդաբար ստացած են առաւելագոյն 100 կէտերէն 45 եւ 33 կէտերը:

Մեր երկու հանրապետութիւններուն կողքին «Սասնակի ազատ» երկիրներու շարքին դասուած է Թուրքիան, որ զեկուցումին համաձայն, վերջին 5 տարիներուն ընթացքին աշխարհի վրայ մարդու իրաւունքներու եւ հիմնարար ազատութիւններու առումով մեծագոյն նահանջը արձանագրած երկիրը ըլլալով հանդերձ, ապահոված է 53 կէտ եւ գրաւած հայկական հանրապետութիւններէն աւելի բարձր դիրք մը:

Իրողութիւններուն անձանօթ անձ մը այս զեկուցումը կարդալէ ետք կրնայ մտածել, թէ մեր երկու հանրապետութիւններուն իրավիճակը այնքան վատ ըլլալու է, որ Թուրքիան, հակառակ վերջին 5 տարիներուն ընթացքին մեծագոյն նահանջը արձանագրած երկիրը ըլլալուն, տակաւին յարաբերաբար աւելի լաւ վայր մը կը մնայ, քան Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը: Սակայն երբ պահ մը աչքէ անցնէ 2016-ի իրադարձութիւնները, անոր թիւր տպաւորութիւնը իսկոյն կը չքանայ:

Անցեալ տարուան 17 յուլիսին Հայաստանի մէջ տեղի ունեցաւ Էրեբունիի պարեկապահակային կեդրոնի բռնագրաւումը, որ աւարտեցաւ 14 օր ետք՝ 31 յուլիսին, սակայն 15 յուլիսին Թուրքիոյ մէջ կատարուած յեղաշրջման ձախող փորձէն ետք ընթացք առաւ «Վիուկներու որս» մը, որ կը յամենայ: 94,867 պետական պաշտօնեաներ կիւենական ըլլալու մեղադրանքով գործէ արձակուած են, տասնեակ հազարաւոր ուսուցիչներ, ակադեմականներ, բանակայիններ, ոստիկաններ եւ դատաւորներ նոյն մեղադրանքով գործէ արձակուած են, բազմաթիւ լրագրողներ ձերբակալուած են եւ պատկերասփիւռի կայաններ ու թերթեր փակուած, քրտամէտ Ժողովուրդներու ժողովրդավարական կուսակցության տասնեակէ մը աւելի երեսփոխաններ ձերբակալուած են:

Այս բոլորը արդեօք իրապէս վրիպած է «Ֆրիտըմ Հաուս»-ի զեկուցումի հեղինակներուն ուշադրութենէն:

Դժուար, թէ այդպէս եղած ըլլայ: Իսկ 2016-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մէջ զգայացունց միակ զարգացումը ապրիլեան քառօրեայ պատերազմն էր, որուն մէջ նախապարձակը Ազրպէյճանն էր: Արդեօք պատերազմի դաշտին վրայ հայկական կողմին արձանագրած յաջողութիւնն է պատճառը, որ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի հանրապետութիւնները աւելի խիստ գնահատականներ ստացած են, քան բռնատիրության մութ ամպերով կուտակուած Թուրքիան:

Յամենայն դէպս, պարզ տրամաբանութիւնն իսկ ցոյց կու տայ, թէ հանրության ներկայացուածը ոչ առարկայական զեկուցում մըն է:

ՎԱՀՐԱՍ ԷՍՄԻԵԱՆ

ԼՈՒՐԵՐ ԳԱՂՈՒԹՆԵՐԷՆ

Հրանդ Տինքի Յիշատակին Նուիրուած Ձեռնարկներ



«Ակօս» երկլեզու շաբաթաթերթի գլխաւոր խմբագիր Հրանդ Տինքի մահուան 10-րդ տարելիցին առթիւ, 21 յունուարին Թուրքիոյ, Հայաստանի եւ սփիւռքի տարածքին կազմակերպուեցան զանազան ձեռնարկներ:

* Թիֆլիսի Ս. Էջմիածին եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ վիրահայոց թեմի

առաջնորդ Վազգէն եպս. Միրզախանեանի, կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն:

* Վիրահայոց թեմի «Հայարտուն» կեդրոնի «Գալուստ Կիւլպէնկեան» սրահին մէջ տեղի ունեցաւ թուրք լուսանկարիչ Ումուտ Վեդատի «Ո՛վ եմ ես» խորագրով լուսանկարչական ցուցահանդէսին բացումը՝ նուիրուած Հրանդ Տինքի: Ցուցադրուած էին լքուած շինութիւններ, ամայացած գիւղեր ու քաղաքներ, փլատակ վանքեր ու տաճարներ:

«Հայարտուն» կեդրոնի ղեկավար Լեւոն Զիդիլեան իր բացման խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց Ումուտ Վեդատին՝ թրքական իշխանութիւններուն վերաբերմունքը արհամարհելուն, Յեղասպանութեան թեման բարձրացնելուն, նաեւ Հրանդ Տինքի յիշատակը սոյն ցուցահանդէսով նշելուն համար:

Ումուտ Վեդատը իր ելոյթին մէջ անդրադարձաւ Թուրքիոյ մէջ խօսքի ազատութեան, Հայոց Յեղասպանութեան թեմային եւ լուսանկարներուն միջոցով արդարութեան ձայնը լսելի դարձնելու, հայերու դէմ թուրք ազգայնամոլներու գործած ոճիրները սերունդներուն հասանելի դարձնելու իր նպատակին մասին:

Ելոյթ ունեցան Իրակլի Կակապաճէն, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթեան, «Խաղաղութեան հիմնադրամ»-ի նախագահ Կիորկի Թումասեան, Վրաստանի մէջ Հայաստանի դեսպանութեան խորհրդական Կարէն Մելիքեան, «Ալիք միտիա օն լայն» հայերէն լրատուամիջոցի գլխաւոր խմբագիր Արսէն Խարատեան:


Վազգէն եպս. Միրզախանեան իր օրհնութեան եւ գնահատանքի խօսքին մէջ անդրադարձաւ Հրանդ Տինքի ապրած կեանքին եւ գործունէութեան՝ շէշտելով անոր արժանաւոր հայորդիի ազատամտութիւնը, ժողովրդավարական գաղափարները, պայքարը՝ ազգայնամոլութեան եւ ճշմարտութեան խեղաթիւրման դէմ:

www.aztagdaily.com

Հայաստան-Արցախի Ֆոնտը Անցեալ 13 Ամիսներուն 22 Միլիոն Տոլարի Նպաստ Հայթայթած Է Հայաստանին Եւ Արցախին

1 դեկտեմբեր 2015-էն 31 դեկտեմբեր 2016-ի միջեւ Հայաստան-Արցախի ֆոնտը աւելի քան 22 միլիոն տոլարի արժէքով մարդասիրական օժանդակութիւն հայթայթեց Հայաստանի ու Արցախի բնակչութեան:

Հայաստան-Արցախի ֆոնտը 16 միլիոն տոլարի ընդհանուր արժէքով դեղորայք եւ մարդասիրական այլ պիտոյքներ ապահովեց հետեւեալ բարեգործական կազմակերպութիւններէն. «Ամերիքերգ» (8,4 միլիոն տոլար), «Տայրեքթ ռիլիֆ ինթըրնէշնըլ» (5,5 միլիոն տոլար), Կաթողիկէ բժշկական առաքելութեան վարչութիւն (875.000 տոլար), «Հէլթ փարթնըրզ ինթըրնէշնըլ», Քանատա (818.000 տոլար), «ՄՋԲ ինթըրնէշնըլ» (606.000 տոլար), «Ֆոուն կրօվ քոմփէշըն սենթըր» (543.000 տոլար) եւ «Ֆիտ տը չիլտրըն ֆոնտ» (351.000 տոլար):



Այլ կազմակերպութիւններ եւս մեծարժէք ապրանքներ նուիրած են նշեալ ժամանակաշրջանին. «Փրայմ տելքթեր» (777.000 տոլար), Պոսթընի Ամերիկահայ բժշկական միութիւնը (717.000 տոլար), «Փրոճէքթ ագապ» (586.000 տոլար), Հայ որբերու օգնութեան միութիւնը (552.000 տոլար), Աւստրալիոյ Հայ քրիստոնէայ առաքելութիւնը (288.000 տոլար), Հայաստանի ակնաբուժական ծրագիրը (280.000 տոլար), Բրիտանիոյ Հայ աւետարանական խորհուրդը (262.000 տոլար), տոքթ. Ճորճ Խաչերեան (255.000 տոլար), «Ֆոքլուս ան չիլտրըն նաու» (201.000 տոլար), Ամերիկայի Հայ աւետարանչական ընկերակցութիւնը (188.000 տոլար), «Հայ փարոս» բարեգործական հիմնարկը (150.000 տոլար) եւ «Սեմրափլաս ֆաունտէշըն», Զուիցերիա (128.000 տոլար), «Հայաստանի բարեկամներ» կազմակերպութիւնը (84.000 տոլար), «ՏԲ փապլիշինկ» ընկերութիւնը (43.400 տոլար), Սան Ֆրանսիսքօ շրջանի «Հայաստանի բարեկամներ»-ը (17.000 տոլար), «Վարդանանց ասպետներ» (15.000 տոլար), «Թիւֆէնքեան» հիմնարկը (9000 տոլար) եւ բժ. Ալպերթ Ֆիլիփս (5000 տոլար):

1 դեկտեմբեր 2015-էն ի վեր Հայաստան-Արցախի ֆոնտին կողմէ Հայաստանի ու Արցախի բնակչութեան հայթայթուած աւելի քան 22 միլիոն տոլարի մարդասիրական օժանդակութիւնը հայրենիք փոխադրուած է 29 թոնիչքներով եւ 43 ծովարկղերով:

Անցեալ 27 տարիներուն, Հայաստան-Արցախի ֆոնտն ու զայն նախորդած Միացեալ հայկական ֆոնտը, միասնաբար, Հայաստանին ու Արցախին հայթայթած են 741 միլիոն տոլար ընդհանուր արժէքով մարդասիրական օժանդակութիւն՝ 158 թոնիչքներով եւ 2333 ծովարկղերով:

Հայաստան-Արցախի ֆոնտի նախագահ Յարութ Սասունեան յայտնեց, որ Հայաստան-Արցախի ֆոնտին կանոնաւոր դրութեամբ կ'առաջարկուին միլիոնաւոր տոլարի արժէքով կեանքեր փրկող դեղեր ու բժշկական պիտոյքներ, աւելցնելով, որ իրենք մեծապէս կը քաջալերեն առատաձեռն նուիրատուութիւնները, որպէսզի կարենան շարունակաբար կենսական նպաստ տրամադրել Հայաստանի եւ Արցախի բոլոր բժշկական կեդրոններուն:

Հանդիպում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային Ժողովի Պատգամաւոր Արմէն Սարգսեանի

19 յունուարին Ազգային Ֆերահեան վարժարան այցելեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի պատգամաւոր Արմէն Սարգսեան, որ Ամերիկա հրաւիրուած էր ՀՅԴ 126-ամեակի տօնակատարութեան օրուան իբրեւ գլխաւոր բանախօս:



12-րդ դասարանի աշակերտ Նարեկ Գոլյումճեան բարի գալուստի իր խօսքին մէջ՝ շեշտը դրաւ հայ ժողովուրդի փառաւոր յաղթանակներուն վրայ՝ աւելցնելով, որ այդ փառաւոր յաղթանակներուն եկաւ միանալու հայ ժողովուրդի հաւաքական կամքի եւ միասնական ուժի յաղթանակի խորհրդանիշ արցախեան շարժումը, որ նոր էջ մը բացաւ հայ ազատագրական պայքարի մեր պատմութեան մէջ: Ան նաեւ ամփոփ կէտերու մէջ ներկայացուց օրուան բանախօս Արմէն Սարգսեանի կենսագրական գիծերը:


Սարգսեան իր խօսքին մէջ գոհունակութիւն եւ հպարտութիւն յայտնեց իրեն ընծայուած առիթին համար՝ այցելելու Ազգային Ֆերահեան վարժարան եւ ծանօթանալու աշակերտութեան հետ: Ապա ան անդրադարձաւ Արցախի ներկայ իրավիճակին, ազրպէյճանցիներուն կողմէ զինադադարի խախտումներուն մասին, եւ յաջորդական սերունդներու Արցախի սահմաններու պաշտպանութեան: Եզրափակելով իր խօսքը՝ Սարգսեան վստահեցուց, որ հայրենիքը բոլորիս է, եւ եթէ ներկայիս սփիւռք ենք, ապա ապագային պէտք է մտածենք հայրենիք վերադառնալու մասին:

Վարժարանի տնօրենուհի Սուսի Շանլեան իր կարգին շնորհակալություն յայտնեց Արմեն Սարգսեանին եւ վարժարանին կողմէ յուշանուէր մը յանձնեց հիւրին:

Յայտագիրը վերջ գտաւ Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ հովիւ Ռազմիկ քինյ. Խաչատուրեանի «Տէրունական աղօթք»-ով:

Ձեռնարկի ընթացքին գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր:

Լոյս Տեսաւ Վահէ Պէրպէրեանի «Յանուն Հօր Եւ Որդւոյ» Վէպը



Վերջերս «Արաս» հրատարակչատունէն լոյս տեսաւ սփիւռքահայ արուեստագէտ Վահէ Պէրպէրեանի «Յանուն Հօր Եւ Որդւոյ» խորագիրը կրող ժամանակակից կեանքէ առնուած դիւրին ընթեռնելի վէպը:

Շարժապատկեր մը յիշեցնող վէպին դէպքերը տեղի կ'ունենան Հոլիվուտի մէջ: Հօր մը եւ անոր զաւակին երկու աշխարհները իրարու կը բախին: Երիտասարդ ամերիկուհի մը ապաստան կը գտնէ անոնց տան մէջ: Որդին՝ Հրայր, որ հայկական վարժարանի մը մէջ ուսուցիչ է եւ գիշերներն ալ՝ սիրողական դերասան մը, կը սիրահարի աղջկան եւ այս պատճառով կը դառնայ իր շուրջիններուն թիրախը, նաեւ իր եւ հօրը միջեւ մշակութային եւ բարոյական բախումը կը սաստկանայ:

Պէրպէրեանի այս գործը կը բանայ ընկերային, մշակութային եւ սեռային


աշխարհ մը, որ իր անկեղծութեամբ կը ցնցէ ու կը յուզէ ընթերցողը:

Գրիշ Դաւթեանի «Օրաւոր» Գիրքին Շնորհահանդէսը

19 յունուարին «Ապրիլ» գրախանութին մէջ տեղի ունեցաւ բանաստեղծ Գրիշ Դաւթեանի նոր բանաստեղծական ժողովածու «Օրաւոր» գիրքին շնորհահանդէսը:

Բացման խօսքը արտասանեց Աննո Երեցեան, որ անդրադարձաւ գիրքին եւ հեղինակին կենսագրութեան: Ան նկատել տուաւ, որ «Օրաւոր» գիրքը Դաւթեանի հեղինակած եօթներորդ գիրքն է: Երեցեան յայտնեց, որ հեղինակը, շնորհիւ իր գրականութեան, մշակութային եւ ազգային-հասարակական ծառայութիւններուն, արժանացած է գնահատագիրներու եւ շքանշաններու:

Այնուհետեւ արձակագիր Պօղոս Քիւփելեան կատարեց գիրքին ներկայացումը: Ան գնահատեց Դաւթեանին գրականութիւնը՝ հաստատելով, որ անոր գլխաւոր թեման գլխագիր Սէրն է՝ իր համամարդկային եւ տիեզերական իմաստով:



Արձակագիր Ռ. Կորին շնորհաւորելով գիրքին ծնունդը՝ նկատել տուաւ, որ Գրիշ Դաւթեան սիրերգակ է՝ սիրային խոր, զգացումով լեցուն բանաստեղծութիւններով, հայրենաերգակ է՝ հայրենասիրական գրութիւններով, մարդերգակ է՝ մարդկային արժէքները բարձր դասող քերթուածներով:

Իրանահայ միութեան «Տեղեկատու» ամսագրի խմբագիր, բանաստեղծ, երգիծագիր Ներսէս Տէր Մեսրոպեան, որ պատմեց յուշեր իրենց ժամանակի Իրանահայ գրողներու միութեան մասին, որուն անդամ էին ինք եւ Դաւթեան:

Արձակագիր Կիմա Կիրակոսեանը շնորհաւորեց հեղինակին նոր գիրքը եւ կատարեց կարգ մը ընթերցումներ:

Այնուհետեւ շնորհակալական խօսքով ելոյթ ունեցաւ գիրքին հեղինակը, որ կենսագրական հետաքրքրական յուշեր պատմեց, նաեւ գիրքէն ընթերցումներ կատարեց:

ԱՅԼԱՉԱՆ

Ճափոնական Դաստիարակությունը

Ճափոն այցելողները յաճախ կը զարմանան՝ տեսնելով տարբեր սերունդներու վերաբերմունքը իրարու նկատմամբ: Երեխաները լսող են եւ խելօք, մեծերը՝ հաւասարակշռուած, տարեցները՝ սիրուած ու յարգուած: Պատճառը երեխաներուն դաստիարակութիւնն է, որ արմատացած է բոլորին մէջ:

Դարեր առաջ ճափոնցի մայրերը կը համատեղէին աշխատանքն ու երեխային դաստիարակութիւնը: Չկային մանկապարտէզներ կամ տունը նստած տատիկներ՝ պահելու համար երեխաները, մինչեւ մայրերը իրենց գործերը աւարտէին: Հետեւաբար երեխան կ'ըլլար հոն, ուր մայրը կ'ըլլար: Եթէ մայրը դաշտ պիտի երթար, երեխան կը կապէր մէջքին եւ հետը կը տանէր:



Զարմանալի չէ, որ ներկայիս ալ ճափոնուհիները կը նախընտրեն երեխաները դաստիարակել այդ աւանդութեամբ: Ուր ալ ըլլայ մայրը, ինչով ալ զբաղի, փոքրիկը միշտ իրեն հետ է՝ գիրկը, մէջքէն կամ ձեռքէն բռնած:

Որպէս կանոն ճափոնցի մայրերը տունը կը մնան, մինչեւ երեխային 3 տարեկան դառնալը: Թէեւ երկրին մէջ կան մանկապարտէզներ, բայց երեխան մանկապարտէզ դրկելը շատերու համար ամօթալի է:

Թէ՛ տունը եւ թէ՛ մանկապարտէզը երեխային կը սորվեցնեն ըլլալ դաստիարակուած եւ ուշադիր ոչ միայն իրենց, այլեւ ուրիշներու, անասունները եւ նոյնիսկ անշունչ առարկաներու նկատմամբ:

Միսալ է մտածել, որ երեխային դաստիարակութիւնը միայն կնոջ ուսերուն դրուած է, քանի որ երեխային հետ մեծ հաճոյքով կը զբաղի նաեւ հայրը:

Ճափոնցի երեխաները կը վայելեն իրենց ծնողներուն ուշադրութիւնը. անոնք միասին կը զրուցեն, կը խաղան, կը զբօսնեն, կ'ուտեն...

Ճափոնցի ծնողները երբեք՝

- Իրենց ձայնը չեն բարձրացներ,
- Քարոզներ չեն տար,
- Մարմնական պատիժներ չեն գործադրեր:

Ճափոնցիները իրենց երեխաներուն կը սորվեցնեն՝

- Ըլլալ նուրբ,
- Ըլլալ ուշադիր ուրիշին նկատմամբ,



– Ոչ ոքի չխանգարել իրենց վարքագիծով:

Ճափոնցի ծնողները պոռալով կամ պատժելով չեն սրբագրեր իրենց զուսկներուն սխալները: Ծնողքին ձայնի շեշտադրումէն եւ հայեացքէն երեխաները կ'անդրադառնան իրենց սխալին:

Ակնյայտ է, որ Ճափոնի մէջ երեխաները սիրուած եւ գնահատուած են իրենց ծնողներուն կողմէ, անոնք ծնած օրէն հասարակութեան մէջ կը ստրվին կեանքի սկզբունքները:

Անշուշտ, կրթական այս համակարգը անսովոր է, այլ ժողովուրդներու համար: Բայց հարիւրաւոր տարիներու փորձը ցոյց տուած է, որ անիկա չափազանց արդիւնաւէտ է եւ այդպէս կը դաստիարակուին օրինապահ, կիրթ եւ քաղաքավար վերաբերմունք ունեցող քաղաքացիներ:

Խոհանոցը Գործուող 6 Միայլ



Մաքրութիւնը չափազանց կարեւոր է, յատկապէս՝ խոհանոցին մէջ: Ահաւասիկ՝ 6 հաւանական սխալներ, գորս շատեր կը գործեն առանց անդրադառնալու:

– 1 – Չլուացուած պտուղներն ու բանջարեղէնները սառնարանը դնել մաքուր ուտելիքներուն կողքին: Անոնց մանրէները անխուսափելիօրէն պիտի տարածուին սառնարանին մէջ եւ թերեւ կամ ծանր թունաւորումներու դուռ պիտի բանան:

– 2 – Կերպընկալէ կամ խաւաքարտէ տուփերով բերուած ուտելիքները սառնարանը դնել մնացեալ

ուտելիքներուն կողքին: Թելադրելի է ձերբազատիլ այդ տուփերէն, ուտելիքները փոխադրել կափարիչով օժտուած ամաններու մէջ եւ կամ ծրարել զանոնք ալիւմինիում կամ կերպընկալ թերթերու մէջ:

– 3 – Միսը լուալ նախքան սառնարանը դնելը: Միսալ է այս սովորութիւնը: Միսը ջուրին տակ բռնելով՝ մանրէները չեն մեռնիր, միակ լուծումը զայն շատ լաւ եփելն է:

– 4 – Հաւկիթը լուալ նախքան սառնարանը դնելը: Այս սովորութիւնն ալ սխալ է եւ անհիմն: Հաւկիթը ներսէն ունի շատ նուրբ թաղանդ մը, որ հաւկիթին դեղնուցն ու ձերմկուցը կը պաշտպանէ կեղեւէն ներս թափանցող մանրէներէն:

– 5 – Տաք ուտելիքը սառնարան փոխադրելը: Արդարեւ, այդ տաք ուտելիքը կը խախտէ սառնարանին ներսի ջերմաստիճանը, ինչ որ գէշ անդրադարձ կ'ունենայ մնացեալ ուտելիքներուն վրայ:

– 6 – Խոհանոցին միս կտրելու տախտակը օգտագործել նաեւ բանջարեղէններ մանրելու համար: Իւրաքանչիւրը պէտք է ունենայ իրեն յատուկ տախտակը, անոնք պէտք է ըլլ ան տարբեր գոյնի եւ զանազանուին իրարմէ: